ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «09» սեպտեմբերի 2010 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն N 27-Ա/Ք

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՊԱՐԳԵՎՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ ԵՎ
ՇՆՈՐՀՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության համակարգում գործող գիտության պետական կոմիտեի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-Ի N 1579-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N 1269-Ն որոշման 12-րդ կետի 1-ին և 4-րդ ենթակետերով, ինչպես նաև ՀՀ և օտարերկրյա գիտաշխատողների, գիտության ոլորտում գործող անձանց վաստակը գնահատելու և հանրությանը ներկայացնելու, նրանց վարկանիշի բարձրացմանը նպաստելու նպատակով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի պարգևների շնորհման կարգը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Հաստատել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի «Ոսկե մեդալի» տեսքը և բնութագիրը՝ համաձայն հավելված 2-ի :

3. Հաստատել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի «Ոսկե մեդալի» վկայականի ձևը՝ համաձայն հավելված 3-ի:

4. Հաստատել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի պատվոգրի ձևը՝ համաձայն հավելված 4-ի:

5. Հաստատել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի շնորհակալագրի ձևը՝ համաձայն հավելված 5-ի:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար Կ. Հայրապետյանին:

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված 1

ՀՀ կրթության և գիտության նախարարության
գիտության պետական կոմիտեի նախագահի
2010 թվականի սեպտեմբերի 9 - ի N 27-Ա/Ք հրամանի

ԿԱՐԳ

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի պարգևների շնորհման

1. Սույնով սահմանվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) պարգևների շնորհման կարգը:

2. Կոմիտեի պարգևի շնորհման նպատակն է գնահատել և հանրությանը ներկայացնել ՀՀ և օտարերկրյա գիտաշխատողների, գիտության ոլորտում գործող անձանց վաստակը, բարձրացնել նրանց վարկանիշը:

3. Կոմիտեի պարգև կարող է շնորհվել ՀՀ և օտարերկրյա գիտաշխատողներին, գիտական կազմակերպությունների ճարտարագիտատեխնիկական և վարչասպասարկող աշխատողներին, գիտության ոլորտում գործող և վաստակ ունեցող այլ անձանց, ինչպես նաև Կոմիտեի աշխատակիցներին:

4. Կոմիտեի պարգևներն են՝ «ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի «Ոսկե մեդալը» (այսուհետ՝ «Ոսկե մեդալ»), «ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի պատվոգիրը» (այսուհետ՝ Պատվոգիր) և «ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի շնորհակալագիրը» (այսուհետ՝ Շնորհակալագիր):

5. «Ոսկե մեդալ» շնորհվում է հիմնարար և կիրառական գիտությունների բնագավառում արդիական խնդիրների հետազոտություններում ձեռքբերումների, գիտական կադրերի պատրաստման և գիտության ոլորտի զարգացման գործում ունեցած ավանդի և ներդրումների համար:

«Ոսկե մեդալի» հետ միասին հանձնվում է համապատասխան վկայական, որի նմուշը հաստատվում է սույն հրամանով:

6. Պատվոգիր շնորհվում է գիտության և տեխնիկայի բնագավառում ունեցած ձեռքբերումների, գիտության ոլորտում երկարամյա բարեխիղճ աշխատանքի համար:

7. Շնորհակալագիր տրվում է Կոմիտեի գործունեությանն աջակցելու, գիտական կարևոր միջոցառումների կազմակերպման և անցկացման, գիտական ու վարչական արդյունավետ գործունեության համար:

8. Կոմիտեի պարգև շնորհելու վերաբերյալ որոշում կայացնում է Կոմիտեի նախագահը:

9. Կոմիտեի պարգևների համար թեկնածություններ կարող են առաջադրել գիտական կազմակերպությունները, բուհերը, գերատեսչությունները, ՀՀ ԳԱԱ նախագահությունը, հասարակական կազմակերպությունները, այլ ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև Կոմիտեի նախագահը:

10. Պարգևատրվող թեկնածուների վերաբերյալ միջնորդագիրը ներկայացվում է Կոմիտեի աշխատակազմ (հավելված 6):

Միջնորդագրի հետ միաժամանակ Կոմիտեի աշխատակազմ է ներկայացվում թեկնածուի՝

- կենսագրական տվյալները,
- անձնագրի պատճենը,
- բնութագիր՝ ստորագրված այն ներկայացնողի կողմից:

11. Կոմիտեի պարգևները հանձնում է Կոմիտեի նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ Կոմիտեի աշխատակազմի ղեկավարը:

12. Պարգևատրված անձինք պարտավոր են խնամքով պահպանել Կոմիտեի կողմից շնորհված պարգևը:

13. Պարգևատրված անձի մահվան դեպքում պարգևը կարող է որպես հիշատակ պահվել նրա ժառանգների մոտ կամ վերջիններիս համաձայնությամբ՝ հանձնվել թանգարաններից մեկին:

14. Կոմիտեի պարգևների կորստի դեպքում տրվում է միայն համապատասխան հրամանի պատճենը:

Հավելված 2

ՀՀ կրթության և գիտության նախարարության
գիտության պետական կոմիտեի նախագահի
2010 թվականի սեպտեմբերի 9 - ի N 27-Ա/Ք հրամանի

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի

«ՈՍԿԵ ՄԵԴԱԼ»

ՏԵՍՔԸ

Մեդալի երեսը

Մեդալի դարձերեսը

ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Նյութը՝ արծաթ (ոսկեզօծ 999 հարգի)

Տրամագիծը՝ 25 մմ

Որակը՝ պրուֆ

Հարգը՝ 925

Քաշը՝ 6 գր

Հավելված 3

ՀՀ կրթության և գիտության նախարարության
գիտության պետական կոմիտեի նախագահի
2010 թվականի սեպտեմբերի 9 - ի N 27-Ա/Ք հրամանի

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի

«Ոսկե մեդալի» վկայական

ՀՀ ԿԳՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Ո Ս Կ Ե Մ Ե Դ Ա Լ

Շնորհվում է

պաշտոնը

գիտական աստիճանը, կոչումը

անունը, հայրանունը, ազգանունը

հիմնարար և կիրառական գիտությունների բնագավառում արդիական խնդիրների հետազոտություններում ձեռքբերումների, գիտական կադրերի պատրաստման և գիտության ոլորտի զարգացման գործում ունեցած ավանդի և ներդրումների համար:

ՀՀ ԿԳն գիտության պետական կոմիտեի նախագահ ---------- /Ա.Ա.Հ./
(ստորագրություն)

Հավելված 4

ՀՀ կրթության և գիտության նախարարության
գիտության պետական կոմիտեի նախագահի
2010 թվականի սեպտեմբերի 9 - ի N 27-Ա/Ք հրամանի

ՀՀ ԿԳՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Պ Ա Տ Վ Ո Գ Ի Ր

Շնորհվում է

պաշտոնը

գիտական աստիճանը, կոչումը

անունը, հայրանունը, ազգանունը

գիտության և տեխնիկայի բնագավառում ունեցած ձեռքբերումների, գիտության ոլորտում երկարամյա բարեխիղճ աշխատանքի համար:

ՀՀ ԿԳն գիտության պետական կոմիտեի նախագահ ---------- /Ա.Ա.Հ./
(ստորագրություն)

Հավելված 5

ՀՀ կրթության և գիտության նախարարության
գիտության պետական կոմիտեի նախագահի
2010 թվականի սեպտեմբերի 9 - ի N 27-Ա/Ք հրամանի

ՀՀ ԿԳՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ա Գ Ի Ր

Տրվում է

պաշտոնը

գիտական աստիճանը, կոչումը

անունը, հայրանունը, ազգանունը

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի գործունեությանն աջակցելու, գիտական կարևոր միջոցառումների կազմակերպման և անցկացման, գիտական ու վարչական արդյունավետ գործունեության համար:

ՀՀ ԿԳն գիտության պետական կոմիտեի նախագահ ---------- /Ա.Ա.Հ./
(ստորագրություն)

Հավելված 6

ՀՀ կրթության և գիտության նախարարության
գիտության պետական կոմիտեի նախագահի
2010 թվականի սեպտեմբերի 9 - ի N 27-Ա/Ք հրամանի

ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի ---------- համար
/ պարգևի անվանումը/

Ներկայացնում եմ ---------- ի թեկնածությունը
թեկնածուի անունը, ազգանունը և հայրանունը
ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կողմից պարգևատրման համար:

Կից ներկայացնում եմ թեկնածուի վերաբերյալ կենսագրական տվյալները, անձնագրի պատճենը, բնութագիրը:

Առդիր՝ ---- թերթ:

---------- -- ----------
Լրացնողի անուն, ազգանունը, ստորագրությունը

«--------» ---------- 20 թ.

Կ.Տ.

ՏՎՅԱԼՆԵՐ

ՀՀ ԿԳՆ ԳՊԿ պարգևի ներկայացվող թեկնածուի մասին

Լուսանկարի տեղը

1. Ազգանունը ----------

Անունը ---------- Հայրանունը ----------

2. Սեռը ----------

3. Ծննդյան ամսաթիվը ----------

4. Ծննդյան վայրը ----------
(մարզ, քաղաք, գյուղ)

5. Քաղաքացիությունը ----------

6. Կրթությունը ----------

	Ուսումնական հաստատությունը	Մասնագի տությունը
1.		
2.		
3.		

7. Գիտական աստիճանը ----------

8. Գիտական կոչումը ----------

9. Գիտական աշխատությունները, գյուտերը ----------

---

10. Ատենախոսության բնագավառը, մասնագիտությունը, մասնագիտական դասիչը՝

ա) թեկնածուական----------

բ) դոկտորական ----------

11. Գրախոսվող ամսագրերում վերջին 5 տարիների ընթացքում հրատարակած հոդվածների քանակը (նշել հեղինակ(ներ)ը, վերնագիրը, ամսագիրը, տարին, հատորը, էջերը՝ կցել ձևին)՝

հ/հ	Հեղինակը /ները	վերնագիրը	ամսագիրը	տարին	հատորը	էջերը
1.						
2.						

12. Հինգ լավագույն աշխատությունների կամ հրապարակումների և նախագծերի ցանկը (վերնագիրը, ամսագիրը կամ հրատարակչությունը, տարին, հատորը, էջերը)՝

հ/հ	վերնագիրը	ամսագիրը կամ հրատարակչությունը	տարին	հատորը	էջերը
1.					
2.					

13. Աշխատանքային գործունեությունը՝

Ամսաթիվը		Կազմակերպության անվանումը	Պաշտոնը
Ընդունվելու	Ազատվելու		

14. Այլ պարգևներ և մրցանակներ՝

	Պարգևի անվանումը	Պարգևատրման ամսաթիվը
1.		
2.		

15. Հասցեն ----------

16. Հեռախոսահամարները ----------

17. Էլեկտրոնային փոստը ----------

18.Անձնագրային տվյալներ ----------

(սերիա, համար, երբ և ում կողմից է տրվել)

---------- -- ----------

Թեկնածու անուն, ազգանունը, ստորագրությունը

«-------» ---------- 20 թ.